

Զովաշեն գյուղ՝ Վարչական ղեկավար Սեդրակ Սաֆարյան

Տեղեկություններ գյուղ մասին

Գյուղում գործում են՝ 1 դպրոց, 1 մշակույթի տուն, 1 գրադարան:
Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 2030 մ
Խեռավորությունը մարզկենտրոնից՝ 55 կմ

Բնակչությունը 178 մարդ

ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Մինչև 1948 թվականը Դալլաքլու: Գյուղ՝ Աբովյանից 20 կմ հյուսիս-արևելք:
Հիմնադրել են 1914 թվականին Թուրքիայից գաղթած հայերը: Զովաշենից արևելք և
հարավ պահպանվել են գյուղատեղիներ: Գրկված Հատիս լեռան փեշերով՝ գյուղը
բարձր է ծովի մակերևույթից 2030մ, գտնվում է Հատիս գյուղից Զառ անցնող
տեղական նշանակության ճանապարհի վրա: Կլիման երկարատև ձմռան
պայմաններում ցրտաշունչ է, իսկ ամռանը, անվանը բնորոշ՝ զով: Բնակչության 96
%-ը հայեր են, ապրում են նաև քրդեր: Բնակչությունը զբաղվում է
անասնապահությամբ և հացահատիկային կուլտուրաների մշակմամբ: